Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Դ.Դ.Ն.
Գ.Ա.Ի.Ա.384

ԳԱԳԻԿ

ԱՐԵԱՆ ԼՇԱՆ

(Կոտրածի հեշտությամբ զաւառում Շուշայ երկրորդ դիպմով)

ԳԻՆԸ 15 կ.

ԹԻՖԼԻՍ
1906

891.99
Գ-13

Арм.
3-2737а
91.99
- 13

01 JAN 2009
19 NOV 2011
3-2737а
314

ԳԱԳԻԿ

ԱՐԵԱՆ ԼԵՇԱՆ

(ոտորածի հեսեւանքը զաւառում Շուշուայ երկրորդ դէպքով)

Инв. № 22644

1906

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Մադաթեան փող. № 5.

ԹԻՖԼԻՍ (222)

12 MAR 2013
24:64

ԿՈՉ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻՆ

—

Ահա նոր համբաւ և արեան նշան,
Թաթար խուժանը աւրեց Վարանդան.
Խումբ կազմենք, եղբայրք, վեհ քաջի նման,
Գնանք Վարանդա, հասնենք օգնութեան։

Ձեռքներիս բռնենք մօտին հրացան,
Մէջքներիս կապենք փամփուշտ բաւական.
Գնանք Թշնամուն կանգնենք հանդիման,
Կուենք քաջաբար, չարդենք անսահման։

Ի՞նչու մենք այսպէս դժբախտ ծնուեցինք,
Թշնամու լծի տակը մնացինք.
Բաւ է տանջանքներս երկար քաշեցաւ,
Եղած հայերս հալուեց հատեցաւ։

Թէ ունենայինք մենք մի գլխաւոր՝
Ձէր թողնի այլոց լծի տակ ստոր.
Արիք միանանք մէկ մէկու սիրենք,
Արիւն թափելով՝ գլուխ ձեռք բերենք։

Ձունինք օգնական, չունինք բարեկամ,
Ոմն էր մեզ պաշտպան՝ եղաւ անխնամ.
Դէհ ելէք ոտքի խումբ Դաշնակցական,
Երգիչ Գագիկս լինի ձեզ դուրբան։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում ՍՍՀ
Ա. Մ. Գորկու անվան
40545-67

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հրատարակելով այս գրուածքը, որ վերաբերում է հայ-թրքական ընդհարումներից վնասուած, հալածուած գիւղացիութեան, մեր նպատակն է մատնացոյց լինել Ղարաբաղի և յայտնապէս Վարանդայի դժբախտ դէպքերը, որոնց դժբախտաբար ինքս ականատես եղայ։ Նկարագրածս վերաբերում է մեր կեանքի ամենադառն կողմերից մէկին,—սովի ամենաքայքայիչ ազդեցութեան, որ տեղի է ունեցել այդ կողմերում յիշեալ ընդհարումներից յետոյ։

Լոյս ընծայելով, «Արեան նշան»-ը կարճ ժամանակում, պիտի ունենայ անշուշտ իւր թերութիւնները, որոնց, յուսով եմ, ներողամտաբար կ՚վերաբերի ընթերցողը։

1906 թ. Յունուար ամսի 6-ից կամ 7-ից պատահած արեան նշաններից սկսեալ մինչև այսօր Վարանդայի մեծ մասը կերակրւում էր բանջարեղէններով, քանի որ մի կողմը ճնշուած է ոստիկանութեան խուզարկութիւնից, մի կողմը՝ կարկուտից, իսկ միւս կողմը անիծեալ թուրքերի յարձակումներից։ Վար ու

ցանք չունենալով հայերի ապրուստի մեծ մասը կազմում է բանջարեղէնը, որը վաղ թէ ուշ ձիւնը կը ծածկի։ Բայց այժմ յայտնենք յարգելի ընթերցողներին, թէ ովքեր են բանջար քաղողները և թէ ինչ դրութեան մէջ են ձեռք բերում բանջարեղէնը։

Մելիքսէթ Գաբրիէլեանց

ՄԻ ԿՏՈՐ ՏԵՂԱԿԱՆ ԲԱՌԱՌՈՎ

—Ախջի ըշտեղս քընում Խանըմ վետ կաց մին պատառ դրդըհալ [1]) ընինք.

—Ջըհընամեն տակընում քնըմ, Մընեշակ աքեր, գհար տեռնա ըստի տարէն. քընըմըմ մին պատառ ժէնգեալ [2]) քաղիմ, պիրիմ իփիմ էն եթիմէն [3]) օտին սըսաւ ինին. սև ինի ըստի ժամանակը, որ մունք տեսինք։

—Մընեշակ աքերը քըզ մատաղ լըհա ես էլըմ կեամ ժէնգեալ—մէնգեալ քաղելու. մըտեղ քնինք համ ժէնգեալ քաղինք, համ էլ գիւրուց անինք։

—Ձիւրուցատեղս էլա լցալ, էն հունց կասին թա, խուսուլատեղս էլ. էսա ժէնգեալներն էլա փդացալ. էքիւց ալլօր էլ ծիւնը կըլականա ըլած տակըռմակռէն ծածկէ. յինչաւ կը պահինք էս եթիմ եսընէն. սևը տանէ մեզ, գետը քշի մեզ. ըլըծատարն էլա տիւզնը [4]),

1) Մէկ մէկու դարդը հարցնել։
2) Բանջարեղէն։
3) Որբեր։
4) Քաղցած։

չըլլծատարն էլ. հընգերմ չկայ հըրհվանմ չկայ, որ մինը մին կուտուր հաց տայ, հանցու խօխատ [1]) սըսաւ անիս. ըսկացալընք տեսալ չընք, որ մեր պապերը ցեաքու գիւլիւլըն քաղալ չըրուցրալ, ըղացալ, հաց շինալ, կերալ, ապրալ. մը հէնդ մեր շէնացէք վախըմըն թա քինին իւրանց արտերը հընձին պերին եօլա քինին։

Վա՛ւ, վա՛ւ, պոչըս, ծամրս կըտրրվէ իմ, ախչի պըչչկուտուրու ախչիկ հունց հինձին, թորքերը էնըն քուլուտակերը լիգը. լըհա վեր հայերը քինին արտէն ղրաղը, էն սհաթէն թորքը թրփանդը երա ա ընանական հային վեր քցի. խէ հայերը պէլըն վեր քինին հանդը [2])։

—Պա վեր իտի եա, Մնեշակ աքեր, հոր ընք քնըմ. մըզ էլ երա կանէն վեր քցին. խօխեքս կը ճեան անդար, եկ եա տեռնանք։

—Վախել մէր, քըմատաղ, հրռանալ չընք, էս ղրնդղներաս, փիւրփիւտայ միւրփիւտայ կըքաղինք եա տէռնանք։

—Մընեշակ աքեր, խելքդ հինչա կորըմ չըքերանը [3]) հիբ ըսաի կը կենանք. պա մին պէն չըս գիւտում. յինչըն ասըմ մեր շէնացէք. ասինք լհա իմ մարթս սպընելանը տեսնա գիւտում չըմ թա շաեղրմ. լհա կըժվալըմ, վախըմըմ թա ես էլ մեռնիմ խօխեքս

1) Երեխայ։
2) Դաշտ։
3) Մինչև երբ։

ճեան անդար ընդերու, մըն էլ վեր... պատասխանեց Մանցուն Մնեշակը։

—Հա՛, պա վեր. էդ չանքդ գիւտումըս, խէ մէտքըս անրմ, խաս լհա քու մարթդ աչքէդ ըռաչքէն թղեցէն. պա հունց անրմ Շըհրմանանց Բըլըսանէն. կնէգը. պա հունց անրմ Ըլըվերդունց Սըլէյմանէն նշանածը զանդիւրկը քըցած, ըրտասունքը ըրեսեն սկը տանէ նրա տարը. պա հունց անրմ Ըլըվերդունց Կիւրիւքեօրեն կնէգը, վեր էս իրէքն էլ վեննաւ, ձեռքաւ, ձիաւ, պէռնաւ կորածըն. ծեր մար չուրանայ ա ջահիլ ջիւան տղէք, ըշտաս ձեզ հինչ ըրէն։ մինը Նըրկըրարանց Կոստուն կնէգը, վեր մարթին կուռները կուտրեցէն տարէն, մինը Հիւրունց Գէորքը, վեր համ մորթեցէն համ կըտոր կըտոր ըրէն. ծեր մար չուրանայ այ բէյմուրազ կորած տղէք։ Ախչի պա ըստի մշանք պեներ տեսնողը էլ կը վախէ. հասէ տեսնըմըս էս թրփընչաս ծոցըմըս տըրած. պատրօննէն էլ մաչըմը լիգը, լհա վեր թորքը դիւս կեայ երայըմ ընանական ըսպանիմ. Աստուծ պահէ մեր տաշտակցական թումբի տղէքը. լհա վեր թրփընչին ծէնը հրսկանան՝ դաստի կըլականըն մեզ քեօմագ ինին, վախել մէր, գընգըլըխտա ժէնդեալդ քաղէ։

—Է՛է, Մնեշակ աքեր քեզ հինչ կայ, խօխա չունիս, ըրախա չունիս հուվա գիւտում մըյէ քունըտեղա եըրընկացալ լաց ինիլաւ Ազիրն ծենտամ. գիտումըն թա Ազին թորքերը տարալըն և ապուն նըման ըսպանալ. Ազին քըմատաղ տանի փիւրփիւտըմ քաղալ պըրըլա-

կանըմ իփիմ սխտորիմ օտիք, կոզի հաց չընի... Մը-
նեշակ Աքեր եկ քինինք. համէլ էքուց էլ եկ քինինք
ժէնգեալու. ասըմըն Զբաշշէնա ծօրէն բուստընէն
էնա ժէնգեալաւ լիգը, կը քաղինք պիրինք եօլա քին-
ինք։

—Քինինք լաւբս ասում, լըհա էս շէրէթս ըստեղ
կընականըմ, Խըշատոր ապան աղաուս ա, բալքի
մին բաբաթ տեռնա։

Մեր բանջար քաղողները վերադարձան իրենց
տները։ Մանուշակ կոչւածը, որ հարս էր եղել Ներքին
Թաղավարդ գիւղիմը, բայց այժմ այրի և անզաւակ
լինելուն պատճառով շատ ժամանակ է, որ գտնւում
է իւր ծերունի և միանգամայն չքաւոր եղբօր՝ Խա-
չատուր ապօր մօտ, իւր քաղած բանջարը տարաւ, որ
եփի և եղբօրը երակրէ, կերակրէ... հիւանդին... բան-
ջարով...

Իսկ Խանըմը Զարտանաշէն գիւղի հարսէր. նա հա-
սաւ տուն և տան առաջը տեսաւ, որ երեխաների լացի
ձայնը լսողի մազերը բիգ-բիգ է կանգնեցնում։ Նա բաց ա-
րեց տան դուռը, ասելով. «Լացմէք ինիլ ծեզ մատաղ,
եկալըմ. հինչու մրհարըք լացընում։» Երեխաները մէկ
մէկու յետևից վիզները ծռած, արտասւախառն աչքե-
րով դիմեցին դէպի իրենց մայրը, աղաղակելով. «Ազի
պատառ հաց տօ, տուզնացալընք»։

Ազին ծեզ մատաղ մին պատառ քօնիլիք, չըքե-
բանը փիւրփիւտը իփիմ, համէլքինիմ մին տեղա հաց

փոխ օնիմ բիրիմ, ընդէտը ծեզ երկրցընիմ օտիք քի-
նիք խաղանիք։

Երեխաները հարցրին.» Ազի թորքերը չըքերանը
ըշտեղն եկալ վերքինինք «Մեծ Տախտումը» եա «Ծլռ-
կումը» խաղանինք մեզ կսպանին»։

—Ձեզ մատաղ թորքերը քէցալըն էլ կըլական-
չըն, վախել-մէք։

Մայրը այդ փիւրփիւտով այդ օրը կերակրեց ե-
րեխաներին, բայց թէ ինչպէս, կամ թէ երեխաներին
ինչ յոյսեր տալով, այդ միայն Աստուած գիտէ։

Երկրորդ օրը լուսացաւ որ էր 1906 թւի յուլի-
սի 12-ը և մեր բանջարաքաղները իրար գտան եկ՝ կ-
ցում, որտեղ էլի հաւաքւել էին մի քանի բանջարա-
քաղներ և աղօթում էին Աստուծուն, որ անփորձ
տուն հասցնէ իրենց բանջար քաղելուց յետոյ։ Մա-
նուշակը դառնալով դէպի իւր մօտ գտնւողները ա-
սում է.

—Ա՛ ըխջըկերք ա կնանէք ծոցրներըմդ թրփընչ
կա, թա տերտակըք։

Այդ հարցին ոմանք պատասխանեցին «այո», իսկ
ոմանք, գլխաւորապէս քնքոյշ օրիորդներ, որոնք ծա-
նօթ էին գրական ոճին, քաղաքավարի կերպով պա-
տասխանեցին. մեր առաջնորդ Մանուշակին ասելով».
Մենք ոչ թէ «թարփանչա» ունինք մեզ մօտ, այլ և
մահացու տարճանակներ և բաւականի փամփուշտներ.
և եթէ մի գուցէ փորձանք պատահի, մենք ամուր դիր-

քեր բռնելով թշնամուն կը դիմադրենք մինչև մեր քաջերի օգնութեան հասնելը»։

—Դէ՛հ որ իտիա, վենը մէք կենալ, եկէք քինինք. էտա ըտի ռաշիդ կացէք իմ հար ծեզ մատաղ—ասաց Մանուշակը։

—Մընեշակ աքեր դարդս լըհա մինակ ժէնգեալ քաղելը չի է՛, շատը խըխոցան ըրբսկըմասըմ [1]) ինում. որ զուրթնանան ըսըլականըն-ազի տուզնընք պատառ հաց տո—կա ոչ հշտըղատամ...

—Քար կըտըրիմ, Խանում...

—Ասինք լհա լոխջին բէնը դըժերա, ամմա քունը լոխջան տժերա, քուռանամ քըզ մըհար։

Ինչ և իցէ հասան Զարտանաշէն ձորի աղբիւրը և այնտեղ սկսեցին իրենց բանջար քաղելը։ Մանուշակն ու խանումը տրտնջալով շարունակ գանգատւում էին իրենց բախտից։ Այդ ժամանակ, օրիորդները դառնալով դէպի նրանց, ասացին. «բաւական է այլ ևս այդպիսի պառաւական փթած և հին խօսակցութիւնը. վերջ տուէք նրան և սկսեցէք բանջար քաղել. դուցէ այս ծառերի և թփերի միջից մէկը նկատէ մեզ և լսէ մեր խօսակցութիւնը, նա ինչնիւթ կը քաղէ նրանից. դուք սուս ու փուս կերպով ձեր բանջարը քաղեցէք, իսկ մենք հսկենք չորս կողմը, անց ու դարձ անողներին տեսնենք, դուցէ թշնամի անցնի՝ զգոյշ կենանք, որ վնաս չը տանանք. իսկ քաղած

1) Երեսից չնգնելու համար.

բանջարը վերջը մեր մէջ կը բաժանենք գիւղ գնալու ժամանակ»։

Բոլորը համաձայնուեցան օրիորդների առաջարկութեան հետ, որից յետոյ մեր հայուհիները սկսեցին միաձայն երգել հետևեալը.

Մենք անբախտ օրիորդք՝ պըսակի կարօտ,
Ճերմակ հացի տեղ ուտում ենք արօտ.
Լաւ է պսակւենք մենք սև հողի հետ,
Քան թէ թուրքը մեզ տանի իրան հետ։

Զուզենք ոսկեղէն, չուզենք պաճուճան,
Տըւէք մեր ձեռքը զէնք ու հրացան.
Որ լինենք Ազգի քաջուհի պաշտպան
Թշնամուն ճխկենք առիւծի նման։

Տւէք մեզ փամփուշտ, կապենք ձախ ու աջ,
Արիւն թափելով կընթանանք առաջ.
Լըսէք հայ քաջեր յիշեցէք նախնիք,
Զըտանք թշնամուն քաղցր հայրենիք։

Շատ ենք ունեցել այսպիսի դէպքեր,
Չի յուսահատւենք կուենք անվեհեր,
Քանի որ ունինք քաջ հայի անուն,
Զարդենք ու փշրենք անգութ թշնամուն։

Ունինք մեծ հաւատ, ունինք սրբութիւն,

Զեն ցոյց տալ նշան կամ մի փրկութիւն,
Պիտ ամուր բռնենք Սուրբ Դաշնակցութիւն,
Գուցէ կը ստանանք մի ազատութիւն։

Զինուած զէնքերով կանգնած անվեհեր,
Խրախուսում էք կեցցէք օրիորդներ,
Յուսահատուած Հայոց վեհ քաջերին,
Գազիկն եմ մասնակցող ձեր ցաւերին։

Այո, օրիորդների այս ցաւալի երգեցողութիւնը լսում էր նրանցից ոչ հեռու մոշախառն մանր ծառերի յետևից մի ծերունի։ Թէպէտ այդ գաղտագողի կերպով դիտող ծերունին ականջը սրել էր, որ իմանայ օրիորդների երգի նիւթը, բայց նրա աչքերից արտասուքի փոխարէն արիւն էր հոսում. մերթ ուզում էր խօսել, ձայն հանել, մերթ իմանալով որ կարող է խանգարել նրանց. կանգնում էր և դիտում։ Թողնենք այդ ծերունուն իւր մտատանջութեան մէջ, իսկ տեսնենք ինչ նոր երգ են սկսում մեր ցաւերով լի օրիորդները։ Այդ ժամանակ օրիորդներից մէկը ասաց իւր ընկերուհիներին, որ գան մի ուրիշ եղանակով երգ երգեն։ Նրանք ասացին, մեր երգածները շատ տխուր էին, հիմա քոյրիկ դու սկսիր մենակ երգել, իսկ մենք ձայն կը բռնենք։ Եւ նա սկսեց երգել այսպէս.

Խաւարեց արեգակներս,
Արիք, քոյրեր, մտածենք,

Թշնամին կաւրէ տընեներս,
Սուր ու զէնքը գործ ածենք։

Անցաւ ամառն եկաւ աշուն.
Պէտք է առնենք սուր դաշոյն.
Ինչպէս Անահիտ թագուհին,
Զարդենք անգութ թշնամին։

Ո՜հ, յիշենք Գեօկվա արիւնը,
Պէտք չէ օրիորդ անունը։
Մտնելու ունենանք փափագ,
Դաշնակցութեան լրծի տակ։

Օրիորդներս քաջընտիր,
Պիտ լինենք վրէժխնդիր.
Կամ կուենք քաջի պէս մեռնենք,
Կամ արեան վրէժ առնենք։

Գազիկն է մեզի վրկայ,
Մեզ ոմտ կեղծութիւն չրկայ,
Մենք կուզենք փամփուշտից պրսակ
Որ ստանանք սուրբ փափագ։

Երբ վերջացրեց օրիորդն իւր երգը, ծերունին այլևս չը դիմացաւ, Գեօկվա անունն լսելուն պէս, նա բերանը բացեց և սկսեց երգել աւանդական բայաթու այս կտորը.

Ազիզիամ բալա դաղի,
Բալա դիւգուն բալա դաղի,
Համիդաղլար սաղալը,
Սաղալմազ բալա դաղի։

Օրիորդները լսելով ծերունու ձայնը, հաւաքուեցին նրա մօտ և սկսեցին սիրտ տալ ու մխիթարել։ Այդ ժամանակ ծերունին խնդրեց օրիորդներին ասելով. «Ախջիկներս մէկ հատ երգ էլ երգեցէք ականջ դնիմ և յետոյ արդէն երեկոյ է՝ ժամանակ է, որ տուն գնաք»։

Օրիորդները սկսեցին երգել հետևեալ երգը.

Ահա չունինք հաց չունինք կերուխում,
Քանզի մենք արեան ծոցն ենք օրօրուում.
Ո՞ւր ես քաջ Լևոն, ո՞ւր ես քաջ Տիգրան
Զարթէք նայեցէք այժմ մեզ վերայ։

Արիւնով ներկուեց սիւնեաց դաշտերը,
Թող ուշք դարձնեն ռուսահայերը.
Ուղարկեն մեզի թունաւոր պահեստ,
Որ տանք թշնամուն լաւ ջարդ ու փախուստ։

Պէտք չէ ամուսին, պէտք չէ մեզ պրսակ,
Պէտք չէ մեզ խաչը, պէտք չէ մեզ ճաշակ.
Տրուէք մեր ձեռքը մօսին հրացան,
Ջարդենք թշնամուն վերջ տանք յաւիտեան։

Պիտ արիւն թափենք վեհ քաջի նման,
Հայ ազգի համար որոշենք սահման,
Ստանանք ազատ փառք մեր հայութեան,
Պարգենք դրօշակ սուրը ազատութեան։

Գազիկն եմ տխուր, սիրտս լի վէրքով
Այժ տուէք ազգին ձեր տխուր երգով
Կը յիշուէք օրիորդք նախնի կանանց պէս,
Ձեր անուան թատրօն կը կազմեն հանդէս։

Վերջացնելով իրենց երգը օրիորդները միաձայն գոչեցին «կեցցէ քաջութիւն, կեցցէ Հ. Յ. Դաշնակցութիւնը»։ Կրկնելով մի քանի անգամ այդ «կեցցէները» օրիորդները մօտեցան համբուրեցին ծերունու ձեռքը, որից յետոյ հեռանալով նրանից, գնացին բանջար քաղող կանանց մօտ։ Հասնելով նրանց մօտ օրիորդները յայտնեցին նրանց որ արդէն ժամանակ է վերադառնալու գիւղ։ Այդ ժամանակ, յանկարծ լսուեցան սարերի յետևից հրացանի և թնդանօթի ձայներ, որ անընդհատ որոտում էին շրջակայքում։ Այս սարսափելի ձայները լսելուց յետոյ. մեր բանջարաքաղները առանց շփոթելու վերադարձան տուն, որովհետև այդպիսի ձայները սովորական էին դարձել նրանց համար։

Հասնելով գիւղը մեր բանջարաքաղները բաժանեցին իրենց քաղած բանջարը իրար մէջ, այնպէս, ինչպէս որոշել էին։ Բայց թէ արդեօք ինչ միջոցով

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ

պէտք է մաքրեն և եփեն բանջարը, այդ միայն Աստուած գիտէ։ Թէ արդեօք հետևեալ օրն էլ բանջար քաղելու համար գնացող կը լինին և կամ թէ ինչ դրութեան մէջ կըլինեն հազարաւոր քաղցած մանուկներն այդ էլ Աստուած գիտէ։ Բայց այն ինչ խաղաղ տեղ ապրող կան շատ հարուստներ, որոնք չըգիտեն այս խեղճ ու կրակ արարածների դրութիւնը... իսկ այն ինչ նրանց օգնութիւնը շատ անհրաժեշտ էր...

Արեգակն արդէն մայր մտաւ, կամաց-կամաց մութը կոխեց գետինը. բայց քանի մութն ընկնում էր, Զարտանաշէնի Բըղերէն Խութ կոչւած տեղը աւելի էր լուսաւորւում, որովհետև շատ բարձր էր և այնտեղից երևում էր Շուշի քաղաքը, որը այդ ժամանակ գտնւում էր հրդէհների բոցերի մէջ, որոնք լուսաւորում էին գրեթէ ամբողջ գաւառը։ Դէհ ուրեմն այդպիսի դրութեան մէջ կարողացէք ապրել ով Վարանդացիք...

Ամեն մարդու անհրաժեշտ է, որ ցերեկը աշխատէ կերակրւելու և հագնւելու համար. իսկ գիշերները քնի հանգստանայ իր առողջութեան համար, իսկ այն ինչ այժմ սիւնեաց աշխարհի բոլոր գաւառները ամբողջ երկու տարի զրկւած են ապրուստի աշխատանքից և գիշերւայ հանգստութիւնից։

Վտանգաւոր շարժումների պատճառով ամբողջ ժողովուրդը ոտքի էր կանգնել։ Թէ կին թէ երիտասարդ թէ օրիորդ բոլորը բաժանւած էին դիրքերում, որը հրացանով, որը ատրճանակով, իսկ պառաւ կանայքն էլ բազմաթիւ քարեր էին ժողովել իրենց տներում և շարունակ գլուխները շարժելով այս ու այն կողմ քաղցրութեամբ, աղաչելով լռեցնում էին մանր երեխաներին ասելով, «միք վախենալ ձեզ մատաղ, ահա տեսնըմըք էս քարերը ըստեղ թուփ ըրած, լըհա վեր թորքերը օգին թա մտնին ասոնը, էն սհաթեն պումբուռնու նման «երբարնք ընսական գլխընէն ճըղինք ըսպանինք իսկի վախել մէք»։

Խեղճ կանայք. մօտինի գնդակների առաջ ինչ կարող են անել ձեր խնձորաչափ քարերը։ Ինչ և իցէ լուսացաւ և գիշերւայ տեսարանը փոխւեց ցերեկւան. գիշերը Շուշու հրդէհն էր լուսաւորում ամբողջ գաւառը, իսկ ցերեկը հրդեհի ծուխը ամպի պէս ծածկում էր երկինքը։

Ամբողջ գիշերը սրտատրոփ դիրքապահները վտանգի առաջն առնելու համար ցանկանում էին մի բան ուտել, որպէսզի ուժասպառ չըլինեն, բայց աւաղ ուտելու բան չկայ... Վերջապէս Գիւնուն Թումբ կոչւած տեղի դիրքապահները լսում էին Շուշու հրացանաձգութեան սոսկալի ձայները, և դրա շնորհիւ մոռանում են իրենց քաղցը։ Այդ դիրքապահների հրամանատարը ժողովեց-երիտասարդների կէս մասը, որոնց հետ խորհուրդ անելուց յետոյ վճռեցին գնալ Շուշի օգնութեան հայ կուսակներին. որից յետոյ երգեց հետևեալ սրտաշարժ առաջարկութիւնը։

Դէհ ելէք ոտքի իմ քաջ ընկերներ,
Գնանք թշնամուն կըռւենք անվեհեր.

Լցուել է օդը սև մուխ ու ամպեր,
Գուցէ հրդեհուեց մեր հայի տներ։

Չի յուսահատուենք նայելով օդին,
Ձայներ է գալիս հայ թնդանօթին.
Շուշիի մէջը ունինք շատ քաջեր,
Կանչում են մեզի հասէք ընկերներ։

Վարանդացի ենք քաջ կռուող անյաղթ,
Ունինք վեհ քաջեր ներքին Թաղաւարթ.
Թաղլար ու Շեխեր մենք Զարդանաշէն,
Քաջ կռուող Սօսը և Սարգիսաշէն։

Այս վեց գիւղերից խմբուենք հարիւր քաջ,
Կայծակի նման ընթանանք առաջ.
Կռուող ենք անվախ մենք հազարի դէմ,
Դաշնակցական մարշ երգեցէք խնդրեմ։

Քաջ Վարդանեանցը գտնենք Բերդաձոր,
Նա կը տայ մեզի թունաւոր խնձոր.
Նետենք թշնամեաց անյաղթ բանակին,
Մատնենք անները անշէջ կրակին։

Ժամանակ չունեմ երկար խօսելու,
Շուտափոյթ հասնենք դիրքեր բռնելու.
Վերցնենք փամփուշտ անթիւ անհամար,
Պատենք թշնամուն, կռուենք անդադար։

Կամ կռուենք հասնենք մեր նպատակին,
Կամ արժանանանք արեան պսակին.
Զուր չի անցնի հայի գնդակը,
Թող յիշէ մեզի երգիչ Գագիկը...

Այս քաջերը թող գնան իրենց հայ եղբայրներին օգնութեան հասնելու, իսկ մենք յաբգելի ընթերցողներ. ուշադրութիւն դարձնենք Շուշուայ երկրորդ կռտորածի տեղեկութիւններին։

Տարածուեց տխուր համբաւը Շուշուայ,
Կրկին նորոգուեց հին ցաւը Շուշուայ,
Հազարուինն հարիւր վեց թիւին.
Յայտնուեց յուլիս ամսի տասներկուսին։

Շարժումներ եղան թրքաց թաղումը,
Կռուի ձայներ և Արեան հեղումը,
Գոլոշչապովի 1) հանդէպ տան առաջ
Արիւնաշաղաղ ընկած մի հայ քաջ։

Կալանաւորուեց օգնութեան փափաղ,
Անմեղ դիակը, անունը Սահակ.
Սպառազինուած թուրքերը դաժան,
Հասուցին խեղճին պսակը արեան։

---

1) Շուշուայ գաւառի ժամանակաւոր Գեն. Նահանգապետ երկրորդ կռտորածին։

Գոլոշչապովը սառոտիկ հրաման,
Տուեց քաղաքի ոստիկանութեան.
«Վերցրէք այնտեղից անկեալ դիակը,
Ճարեցէք բերէք թուրք աւազակը։

Այդ լերը թրքերը ինձ ընդէմ եղան,
Շուտափոյթ պիտի հանեմ կախաղան.
Ութ զինուորներով և մի ոստիկան,
Դէպի դիակը ուղղեւորուեցան։

Թուրքերի կողմից բացուեց հրացան,
Գնդակ էր թափւում կարկուտի նման.
Փոքրաթիւ զօրքը յուսահատւելով,
Խոյս տուեց ետև երկու զոհ տալով։

Ղումլուղը ընկաւ թուրքերի ձեռքը.
Անմատչելի էր Իրզայի դիրքը.
Ռուսաց մայր ժամը ընկաւ գերութեան,
Կռիւը եղաւ ընդդէմ տէրութեան։

Գոլոշչապովը կանչեց հայերին.
Օգնեցէք ինձի Աստծոյ սէրին.
Դրսից եկած է բազմաթիւ խուժան
Փոքրաթիւ զօրքիս հասէք օգնութեան։

Շուտ վրա հասին մեր հայ քաջերը,
Անցեալ աղէտից վառված սրտերը.

Միաբան ձայնով վրէժ դոռացին,
Թուրքերի վերա հրացան բացին։

Թուրքերից մէկը կանչեց «եա Ալի»
«Գեաւուր էրմանի օրմը սըզդալի.
Դիշխարդան գեալան վար մին Ջան բեզար
Օն գիւն սավաշա դաղ քիմի դոզար»։

Վարդանի ձեռքն էր քաջերի սանձը
Կարեց մինեերով [1]) թուրքերի անցը.
Մտածեց թակարթ սրտի խորքերում,
Դրեց հայդուկներ յաջող դիրքերում.

Հայոց ռումբը Աղաիրզի տան,
Յոյց տուեց թրքաց յաղթուելու նշան.
Փախուստի դիմեց խուժանը ներքև,
Ջան բեզարք եղան երեսնիրը սև։

Ռումբը պայթեց Իրզայի դիրքում,
Որոտմունք եղաւ ամբողջ երկնքում.
Չէր ձայնել այնպէս մեծ թնդանօթը,
Դիրքը քարուքանդ բարձրացաւ օդը։

Յաղթուած դիրքի մէջ երսուն թուրք դիակ,
Նաւթով լի կարաս, վառօդ և գընդակ.

---

[1]) Ական։

Գրտան հայերը Մեծին յայտնեցին,
Թրքաց մի մասը ողջ հրդէհեցին։

Աւազականոց բազմաթիւ տներ,
Հրդէհը սաստիկ դարձրեց աւեր.
Կանչում էին. «Եա Իմամ Հուսէյին».
Ձէր հանում սուրբը Թրքաց հարային։

Գազան Թուրքերից խլեց նպատակ,
Բարձրացաւ երկինք լաց ու աղաղակ.
Խուժանը գոռաց «Ալլահ, Մուհամմադ,
Դառ գիւնումըզդը էյլա բիր հիմդատ»։

Թէ մեծ Թէ փոքր բոլորը փախան,
Հիւնոտից 1) վերև ժայռերը մտան.
Հայ օրիորդները «կեցցէ» երգելով,
Քաջ հայդուկների կեանքը օրհնելով։

Անմիտ Թուրքերը յորսահատուեցան,
Ձեռքներից տին զէնք ու հրացան.
Բազմաթիւ Թուրքեր լալով ու տխուր,
Եկան հայերին եղան անձնատուր։

Կեցցես ով Շուշի, գաւառդ Արցախ
Կեցցեն քաջերդ անվեհեր անվախ.

1) Գիւղի անուն է։

Միշտ անյաղթ լինես հայ ազգդ սիրես,
Երգիչ Գագիկիս անես պարգերես։

Գովասանք Արցախու

Գովասանքի արժանի ես,
Սիւնեաց փայլուն պայծառ Արցախ.
Դարերից ի վեր նշանի ես,
Ունիս մտքեր կայտառ Արցախ։

Պարսկից շատ տանջանք ես կրել,
Շատ Վարդաններ ճամբու դրել.
Կրօնդ ամուր ես բռնել,
Ունիս քաղցր բարբառ, Արցախ։

«Ապառաժում» ծնուեց Վարդան,
Սնուեց ինչպէս քաջըն Վարդան.
Մի խումբ քաջերով միաբան,
Շրջում է քո դաւառ, Արցախ։

Օդ սրլացող թռչունի պէս,
Ցուցին Թուրքերին մի հանդէս.
Արիւնարբու առիւծի պէս,
Սրտերը բոցավառ Արցախ.

Մէկ-մէկու խրախոյս տալով,
Քաջերը վրէժ երգելով.
Թուրքաց Թաղը հրդէհելով,
Փայլում էր նաւթավառ Արցախ։

Յաջող տեղեր դիրք բռնեցին,
Թնդանօթներ արձակեցին.
Կեցցէ յաղթութիւն գոչեցին,
Եղան թուրքեր թշուառ, Արցախ։

Այժ աւեց ազգային սէրը,
Ցրեցին թրքաց գնդերը.
Զուր չի անցան գնդակները
Թշնամիք եղան գառ, Արցախ։

Յաղթութեան նշան ունեցան,
Հայից կորուստներ քիչ եղան.
Ուրախ երգով դադարեցան,
Դէմքերնին լուսավառ, Արցախ։

Գագիկ, աբի քնից զարթնենք,
Ազգի համար արիւն թափենք.
Համօին էլ կեանքը օրհնենք,
Ձեռներնիս խունկ բուրվառ, Արցախ։

Յարգելի ընթերցողներ, ինձ քաջ յայտնի է, որ իւրաքանչիւր տեղեկութիւն իմանում էք լրագրներից և յայտնի է Ձեզ Վարանդայի դրութիւնը. բայց չը նայած դրան խոնարհաբար խնդրում եմ ուշք դարձնել այս փոքրիկ գրքի մէջ յիշած բանջարաքաղների անտանելի վիճակի և քաղցած դրութեան վրայ։

ՎԵՐՋ

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Երգչիս Լսիր

Ո՛վ մարդ, ականջդ բաց երգչիս լսիր,
Հայ ես, հայութեան վրայ սէր ունեցիր.
Հայ ազգդ ունի մի մաքուր սուրբ խնդիր,
Լեր օգնական և քաջ ընկեր ունեցիր։

Ունինք սուրբ նպատակ առաջ բերելու,
Ազգի սեփականութեանը տիրելու,
Առիւծի նման թշնամուդ ճեղքելու,
Աղոցի պէս սուր ատամներ ունեցիր։

Թէ որ քահանայ էլ լինիս ծխական,
Տէր Ղազարու պէս լեր յեղափոխական,
Քարոզներ տուր զէնքերից բարոյական.
Ղևոնդեանց պէս սիրտ անվեհեր ունեցիր։

Մտաբեր Գուրգէն, և մտաբեր Աշոտ,
Մտաբեր Յոփնան և մի լինիր վախկոտ.
Առիւծի պէս մրընչա՛, որ թնդայ օդ
Թշնամուդ յաղթելու յոյսեր ունեցիր։

Գագիկն եմ, սրտումս կայ ազգութեան սէր,
Երգս կը ընծայեմ ընթերցողիդ նէր,
Հայոց քաջ նահատակները մտաբեր,
Դու էլ անձդ ազգիդ նէր ունեցիր։

(Ս. Ստեփանեանի (ՌՈՒԲԷՆԻ) յիշատակին)

Ո՜հ խաւարեց արեգակը,
Արցախից մի աւաղ թըռաւ.
Թերի թողնելով փափագը,
Անօգնական վիզը ծռաւ։

Ո՞վ էր այս ասողը պայծառ,
Գլուխն անգին ինքը կայտառ,
Փայլուն աչքերը բոցավառ,
Առաջնորդող ազգին թշւառ։

Մայրը ազգի համար ծնեց
Արցախում քաջ խմբեր կազմեց.
Տանում էր Սուրբ գործը առաջ,
Ազգասէր Ռուբէնը քաջ։

Բացաւ միութեան դռները,
Անցաւ Սիսեանի լեռները։
Յիշեցէ՛ք քաջ ազգասիրին,
Զարդ տուեց Վաղատցիներին։

Աւերելով թրքաց տներ,
Կորցնելով քաջ ընկերներ.
Ահա քաջութեան նշանը,
Զարդեց իրան հրացանը։

Երբ որ հատաւ փամփուշտները,
Շրջապատեցին թուրքերը,
Քաջութիւնը աշխարհ գովեց,
Քաջը ինքը իրան զոհեց։

Ազնիւ գլուխը կտրեցին,
Թուրքաց գիւղերը քայլցրին,
Զը խնայեց կեանքն անգին,
Հասաւ նախնեաց սուրբ պսակին։

Յանկարծ լաւեց տխուր համբաւ,
Ստեփանեանցը մահացաւ,
Քեռին խմբերով ահագին,
Ուղղուեց անգին դիակին։

Գագիկս յոյս ունիմ ընտիր,
Քեռին կը լինի վրէժխնդիր,
Շատ թուրքերու կառնէ գերի,
Քաջի գլուխը յետ կը բերի։

«Ինչ ժամանակ որ փամփուշտները վերջացաւ ինքը իրան հրացանը չարթեց և իւր ձեռքով իրան մահացրրեց, որ թշնամու ձեռքը չի ընկնի։

Աշխարհի նեղութիւններից

Աշխարհը քո նեղութիւններից,
Մեծ բաժին տուել ես հային.
Զրկելով բարութիւններից
Ամեն բան խլել ես հային։

Ամենից տրամութիւն կառնեն,
Ձեն դիմանայ ծանր բեռնին.
Գերի եղած այլոց ձեռնին.
Ոտքի տակ տուել ես հային։

Լաւ չեմ զգում քո այս բանը,
Աւրել ես հայի նշանը.
Այգու ժիջից այգեբանը,
Զուր տեղէն խեղդել ես հային։

Զզուել են քո գէշ բանից,
Ձեռք վերցրած այգեբանից.
Սոխակի պէս վարդարանից,
Ամեն ժամ զրկել ես հային։

Ունէին փայլուն դրօշակ,
Գլխներին թափար կրակ.
Սրաներումը խորհրդներ փակ
Բանտի մէջ կողպել ես հային։

Զը կայ հայի պէս անտէրը,
Պտղատու այգիները,
Օտարք կը վայելեն խերը,
Գայլի պէս կերել ես հային։

Զի ողջանայ տուած խոցդ,
Ընկնի ձեռիցդ սղոցդ,
Քաջերն առել ես քո ծոցդ,
Գետնի տակ խրել ես հային։

Գազիկն եմ անուանս ցած,
Հայ լինելով, որը մնացած.
Մէկ օր կուշտ ենք տարով քաղցած,
Խիստ ծանր լծել ես հային։

Վարանդացիների ողբը

Աստուած հեռու, տէրութեան գլուխ խառն.
Մեր ողբ ու աղաղակը լսող չկայ,
Քաղձրահնչիւն օդ մեզ համար է դառն
Թոյն լցրած աղբիւրներս մաքրող չկայ։

Թշուառ հայերս մնացել ենք անտէր,
Ընենակիտոս եղան կաշառակեր,

Զուներնք մամոնայ, որ մէնք էլ տանք նուէր,
Պարապ ցուպ ենք մեզ ուշք դարձնող չկայ։

Թշնամիներս զինուած են մենք անզէն,
Ձերք ընկածը ոչխարի պէս կը մորթեն,
Քնակիտսս զէնքերը ձերքներէս կառնեն,
Անօգնական ենք մեզ զէնք տուող չկայ։

Մէկ կողմից շփոթացնող կրակը,
Միւս կողմից թշնամու թափած գնդակը.
Սարսափելի է լաց ու աղաղակը,
Լացողներիս արցունքը սրբող չկայ։

Թշուառ Գագիկ, ողբածդ բաւականայ,
Անտէր որբ հայը որ մէկին դիմանայ.
Արդէն մեր ողբերս ոչխարհ կիմանայ.
Թող լսեն, որ որբ հային օգնող չկայ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-ի ՊՊ ՍՍՀ
Ա. Մ. Մասնայանի անվան

Ազգային գրադարան
NL0313618

24564

Арм.
3-2737

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Զգայմունքներ (սպառուած . . . 70 կ.
2. Արեան նշան . . . . . 15 կ.

Շուտով լոյս կը տեսնի «Անմեղ Զոհեր» վերնագրով գրքոյկը։ Բոլորովին պատրաստ է տպագրութեան համար «Ազատութեան Սղոց» վերնագրով երգարանը։

Գումարով գնողներին 15% զիջում.

Դիմել՝ Ռոստով՝ (Դոնի վրայ) Магазинъ Бр. Гюрджіевыхъ Բաքու՝ Лѣсная. пристань Теръ Арутюнова.